

24/11/2015թ.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Տիգրան Մուկույանը ոտնահարում է «Կրթության մասին» օրենքը» հոդվածի կապակցությամբ

Հանրաքվեի կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է, որ հոդվածը հրապարակված է ակնհայտ սխալներով և խեղաթյուրված փաստերով:

Ցանկացած հրապարակում կամ դրա վերնագիրը ընտրելուց առաջ խորհուրդ ենք տալիս գոնե ծանոթանալ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

Հոդվածում նշվում է. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի կազմակերպման նպատակով քարոզչություն կատարողներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը»:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2.1 կետի համաձայն. «2.1. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կենտրոնական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք քարոզչություն կատարողներին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում»: Նույն կարգն է գործում նաև ընտրությունների ժամանակ:

Այսինքն, ակնհայտ է, որ կենտրոնական հանձնաժողովը նշված հարցով որևէ որոշում կայացնելու լիազորություն չունի, փաստ է, որ նման որոշում չի կայացրել, իմիջիայլոց, նաև նկատենք, որ հանձնաժողովի անունից որոշումներ կայացնում է հանձնաժողովը և ոչ թե նրա նախագահը:

Հաջորդիվ նշվում է, որ. «Մովորաբար կրթական հաստատությունները քարոզչական գործունեություն իրականացնելու նպատակով տրամադրվել է միայն այն դեպքերում, եթե տվյալ դպրոցի կամ մանկապարտեզի դահլիճը տվյալ բնակավայրի միակ պատշաճ տարածքն է եղել: Բայց եթե մոտակայքում հնարավոր է եղել գտնել հանրային միջոցառումներ և հանդիպումներ կազմակերպելու այլ պատշաճ դահլիճ, ապա, որպես կանոն, օգտագործվել է այդ տարածքը: Այդպես եղել է **խորհրդարանական, նախագահական, նաև Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ**»:

Այցելելով ԿԸՀ համացանցային կայք՝ կարելի է միանգամից պարզել նշված տեղեկությունների իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը: Այսպես, ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ առաջարկված ընդհանուր թվով 783 դահլիճներից 219-ը, որոնցից 33-ը Երևան քաղաքում հանդիսացել են դպրոցների դահլիճներ:

Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ առաջարկված ընդհանուր թվով 589 դահլիճներից 54-ը, որոնցից 15-ը Երևան քաղաքում հանդիսացել են դպրոցների դահլիճներ: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 51-ից 34-ը հանդիսացել են դպրոցների դահլիճներ:

Ինչ վերաբերում է դպրոցների դահլիճների տրամադրմանը, ապա հարկ է նկատել, որ դպրոցների դահլիճները առաջարկվել են այն ժամանակահատվածներում, որպեսզի դրանք չխաթարեն ուսումնական հաստատություններում աշխատանքի բնականոն ընթացքը, բացի այդ, դահլիճները տրամադրվում են դրանցում միջոցառում անցկացնելու նպատակով, և ինքնին այդ հանգամանքը չի կարող նույնացվել ուսումնական հաստատությունում քարոզչություն իրականացնելու հետ: Այդ դահլիճների տրամադրման փաստն ինքնին վերցրած, չի կարող որակվել որպես օրենքի խախտում:

**Հայաստանի Հանրապետության
հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով**